ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

ք. Երևան 24 հունվարի, 2019 թ.

Հ Ր Ա Մ Ա Ն № 06-Ա/Ք

**ՎԼԱԴԻՄԻՐ ԵՆՈՔԻ ԱՂԱԲԵԿՈՎԻՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ
ՈՍԿԵ ՄԵԴԱԼ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության կոմիտեի նախագահի 2016 թվականի հունիսի 24-ի «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի պարգևների ձևերը, ներկայացման և շնորհման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի նախագահի 2010 թվականի սեպտեմբերի 9-ի N 27-Ա/Ք հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 29-Ա հրամանով հաստատված հավելվածի 2-րդ, 5-րդ, 7-րդ և 12-րդ կետերը և հաշվի առնելով Բելառուսի գիտությունների ազգային ակադեմիայի նոր նյութերի քիմիայի ինստիտուտի տնօրեն, Բելառուսի գիտությունների ազգային ակադեմիայի ակադեմիկոս, քիմիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վլադիմիր Ենոքի Աղաբեկովի՝ արդիական խնդիրների հետազոտություններում ձեռքբերումներն ու ակնառու նվաճումները, ինչպես նաև գիտակրթական համագործակցության, բարեկամական կապերի ամրապնդման և զարգացման գործում ունեցած նշանակալի ծառայությունները՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Վլադիմիր Ենոքի Աղաբեկովին շնորհել Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության կոմիտեի Ոսկե մեդալ:
2. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ ԿԳՆ գիտության կոմիտեի գլխավոր քարտուղար Լ. Մարդոյանին:

ՍԱՄՎԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ